ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2023

ՍՈԼՖԵՋՈ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ
2) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն
3) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր
4) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն

2 Լարվածք է կոչվում

1) երաժշտական հնչյունների դասավորությունը
2) երաժշտական հնչյունների կանոնավոր շարվածքը
3) երաժշտական համակարգի հնչյունների հավասար բարձրությունը
4) երաժշտական համակարգի հնչյունների բացարձակ բարձրությունը

3 Հնչյունաշարի հնչյունները լինում են

1) հիմնական և ածանցյալ
2) առաջնային և ալտերացված
3) առաջնային և լրացուցիչ
4) հիմնական և օժանդակ

4 Ինտերվալներն ունեն երկու մեծություն՝

1) բացարձակ և լրացուցիչ
2) աստիճանային և տոնային
3) աստիճանական և լրացուցիչ
4) բացարձակ և տոնային

5 Փոքր սեպտիման կազմված է

1) 6 աստիճանից և 5 տոնից
2) 7 աստիճանից և 6 տոնից
3) 7 աստիճանից և 5 տոնից
4) 6 աստիճանից և 7 տոնից

6 Եռատոնն այն ինտերվալն է, որը բաղկացած է

1) երեք հնչյունից
2) երեք տոնից
3) երեք կիսատոնից
4) երեք աստիճանից

7 Մեծացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) մեծ են փոքր ինտերվալներից կես տոնով
2) մեծ են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
3) մեծ են մաքուր և մեծ ինտերվալներից կես տոնով
4) մեծ են մաքուր ինտերվալներից մեկ տոնով

8 Մինոր կվարտսեքստակորդի կառուցվածքն է.

1) մծց.4 + փ.3
2) մք.4 + մ.3
3) մք.4 + փ.3
4) մ.3 + մծց.3

9 Սեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
2) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
4) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը

10 D_3^4- ը կառուցվում է

1) 7-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + մ.3
2) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + փ.3
3) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + մ.3
4) 7-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + փ.3

11 VII_5^6- ը հարմոնիկ մաժորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + փ.3 + մծց.2
2) մ.2 + փ.3 + փ.3
3) փ.3 + փ.3 + փքց.2
4) փ.3 + մ.2 + փ.3

12 II_2-ը մինորում

1) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + մ.3
2) կառուցվում է 1-ին աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3+ փ.3
3) կառուցվում է 7-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3
4) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 + փ.3

13 Հնչյունների միագումարը, որոնք իրենց կապերի հիման վրա միավորվում են տոնիկա ունեցող համակարգում, կոչվում է

1) գամմա
2) լադ
3) տոնայնություն
4) հնչյունաշար

14 Զուգահեռ տոնայնություններն ունեն

1) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
2) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
3) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ

15 Հարմոնիկ մաժորին բնորոշ է

1) 7^{+} աստիճանը
2) 6^{-}, 7^{-} աստիճանները
3) 6^{-} աստիճանը
4) 6^{+} աստիճանը

16 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Փռյուգիական, Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական
2) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական, Լոկրիական
3) Միքսոլիդիական, Անհեմիտոն, Փռյուգիական, Հարմոնիկ
4) Իոնական, Դորիական, Կրկնակի մեծացրած, Լիդիական

17 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) 7^{-} աստիճանը
2) 6^{+}, 7^{+} աստիճանները
3) 6^{-}, 7^{-} աստիճանները աստիճանը
4) 6^{+} աստիճանը

18 Ռիթմ է կոչվում

1) հնչյունների ժամանակային կազմակերպված հաջորդականությունը
2) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը
3) միատեսակ հնչյունների կազմակերպված հաջորդականությունը
4) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների հաջորդականությունը

19 Պարզ են համարվում այն չափերը, որոնք ունեն

1) մեկ կամ մի քանի մաս
2) մեկ մաս
3) մեկ շեշտ
4) մի քանի շեշտ

20 Այն չափերը, որոնք առաջանում են տարբեր պարզ չափերից, կոչվում են

1) բարդ չափեր
2) բարդ խառը չափեր
3) պարզ խառը չափեր
4) փոփոխական չափեր

21 Տակտում կա այնքան խումբ, որքան

1) հիմնական մասերի քանակն է
2) շեշտերի քանակն է
3) թույլ մասերի քանակն է
4) հնչյունների քանակն է

22 Այն նշանը, որը դրվում է հնգագծի սկզբում և ցույց է տալիս որոշակի նոտայի տեղը, կոչվում է

1) չափ
2) բանալի
3) ակոլադ
4) նոտա

23 ♯ նշանը հնգագծի երկրորդ գծի վրա կոչվում է

1) ալտի բանալի
2) բասի բանալի
3) մեցցո-սոպրանոյի բանալի
4) սոպրանոյի բանալի

24 Նշվածներից ո՞ր շարքում են ընդգրկված միայն զարդահնչյունները /մելիզմները/.

1) ֆորշլագ, ֆիգուրացիա, գրուպետտո, տրել
2) արպեջիո, ֆիգուրացիա, տրիոլ, տրեմոլո
3) մորդենտ, տրեմոլո, արպեջիատո, ֆորշլագ
4) ֆորշլագ, տրել, մորդենտ, գրուպետտո

25 Նշվածներից ո՞ր շարքում են բոլոր տերմինները նշանակում տեմպ.

1) Allegro, Grave, veloce, attacca
2) A tempo, Lento, smorzando, ritenuto
3) Prestissimo, Festivo, Ardente, Moderato
4) Largo, accelerando, Andante, piu mosso

26 Հետևյալ տերմինները՝ Sostenuto, Appassionato, Con anima, Leggiero, Doloroso նշանակում են (ըստ հերթականության)

1) Համեստ, տառապալի, ձգձգված, շարժուն, թախծալի
2) Զուսպ, կրքոտ, ոգևորությամբ, թեթև, թախծալի
3) Չափավոր, կրքոտ, հուզված, շարժուն, թախիծով
4) Թախծալի, զգացմունքով, արագ, կրակոտ, կրքոտ

27 Ո՞ր շարքի աստիճաններն են պատկանում սուբդոմինանտային խմբին.

1) VI, IV, II
2) I, III, VII
3) III, V, IV
4) I, IV, VI

28 Ո՞ր շարքում են ընդգրկված Ազատ ոճի պոլիֆոնիայի գրելաձևերը.

1) կոնտրապունկտ, իմիտացիա, ֆուգատո
2) ֆուգա, ստրետտա, մոտետ
3) կանոն, ուղղաձիգ շարժուն կոնտրապունկտ, ֆուգետտա
4) Ֆուգա, ինվենցիա, Basso ostinato

29 Պարզ և բարդ եռամաս ձևերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

1) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը երեք պարզ մասեր են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը՝ երկու բարդ մաս
2) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը պարբերություններ են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը՝ պարզ երկմաս կամ եռամաս ձևեր
3) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը պարզ մասեր են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը՝ բարդ մասեր
4) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը պարզ մասեր են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը երեք բարդ մասեր են

30 Սոնատային ձևը այն ձևն է, որը

1) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երկու բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում
2) հիմնված է երեք թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ
3) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, ռեպրիզ, մշակում
4) հիմնված է երկու թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ

31 Որոշել հատվածի տոնայնությունը.



1) G dur
2) D dur
3) e moll
4) h moll

32 Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել լադերը.



1) Էոլական, Իոնական, Փռյուգիական, Միքսոլիդիական
2) Լիդիական, Միքսոլիդիական, Իոնական, Մաժոր
3) Մինոր, Ամբողջատոն, Էոլական, Լիդիական
4) Դորիական, Լիդիական, Փռյուգիական, Միքսոլիդիական

33 Ո՞ր շարքում են միայն բնորոշ ինտերվալներ.

1) 

2) 

3) 

4) 

34 Ո՞ր տոնայնությունների մեջ են գրված հետևյալ եռատոները.



1) D dur- d moll, H dur- h moll
2) A dur- a moll, H dur- h moll
3) D dur- d moll, B dur-b moll
4) G dur- e moll, Fis dur- fis moll

35 Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել ակորդները.



1) Փքg $_3^5$, II$_5^6$, VII$_3^4$, D$_7$, Փքg $_4^6$, Մաժ 6
2) Մծg $_3^5$, II$_3^4$, II$_5^6$, D$_7$, Մին 6, Փքg $_4^6$
3) Մծg $_3^5$, D$_3^4$, II$_5^6$, VII7, Մաժ $_4^6$, Փքg 6
4) Փքg $_3^5$, VII$_5^6$, D$_5^6$, II$_7$, Մաժ $_6$, Մին 6

36 Ո՞ր տոնայնության մեջ են գրված հետևյալ ակորդները.



1) F dur
2) A dur
3) A dur- a moll
4) G dur- g moll

37 Ո՞ր շարքում են բոլոր լուծումները ճիշտ.

1) 

2) 

3) 

4) 

38 Որոշել հատվածի չափը.



1) 3/4
2) 3/8
3) 6/8
4) 2/4

39 Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել բանալիները և հնչյունները.



1) Բասի՝ Es, h; Ջութակի՝ dis^3, f; Ալտի՝ g, as^2; Սոպրանոյի՝ h^1, ais; Տենորի՝ dis, e^1
2) Բասի՝ ges, h; Ջութակի՝ cis^3, g; Սոպրանոյի՝ h^1, fis; Ալտի՝ g, as^2; Տենորի՝ fis, e
3) Բասի՝ Es, h; Ջութակի՝ fis^3, f; Ալտի՝ f, as^2; Բարիտոնի՝ dis, e^1; Սոպրանոյի՝ h^1, ais
4) Բասի՝ Des, h; Ջութակի՝ fis^3, f; Ալտի՝ f, as^2; Սոպրանոյի՝ h^1, ais; Տենորի՝ dis, e^1

40 Ըստ հերթականության նշել տոնայնությունները, որոնցում կինչի հատվածը՝ փոխադրելով փ.7 վար, քրոմատիկ կիսատոն վեր, բասի բանալի:



1) b moll, a moll, gis moll
2) a moll, gis moll, h moll
3) b moll, as moll, f moll
4) a moll, as moll, c moll

41 Ո՞վ է հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը

1) Մակար Եկմալյան
2) Կոմիտաս
3) Տիգրան Չուխաջյան
4) Քրիստափոր Կարա-Մուրզա

42 Ո՞վ է առաջին հայկական քառաձայն պատարագի հեղինակը

1) Մակար Եկմալյան
2) Կոմիտաս
3) Քրիստափոր Կարա-Մուրզա
4) Բարսեղ Կանաչյան

43 Նշվածներից ո՞ր ռոմանսն է հեղինակել Ռոմանոս Մելիքյանը.

1) «Պաղ ջուր կուգար»
2) «Արևելյան օրորոցային»
3) «Աշուն»
4) «Լորիկ»

44 Ո՞վ է հայկական առաջին բալետի հեղինակը.

1) Էդգար Հովհաննիսյան
2) Արամ Խաչատրյան
3) Գրիգոր Հախինյան
4) Գրիգոր Եղիազարյան

45 Նշվածներից ո՞ր կերպարն է Ավետ Տերտերյանի «Կրակե օղակ» օպերայից.

1) Մոսի
2) Պոետ
3) Աշուղ
4) Դրաստամատ

46 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը հայկական «Հզոր խմբակի» անդամ չէ.

1) Ղազարոս Սարյան
2) Տիգրան Մանսուրյան
3) Առնո Բաբաջանյան
4) Ադամ Խուդոյան

47 Նշվածներից ո՞ր ստեղծագործությունն է գրված բալլադի ժանրում.

1) Միխայիլ Գլինկա՝ «Վենետիկյան գիշեր»
2) Ֆրանց Շուբերտ՝ «Անտառի արքան»
3) Ֆելիքս Մենդելսոն՝ «Արտույտի երգը»
4) Լյուդվիգ վան Բեթհովեն՝ «Մարմոտ»

48 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Գոսերի տրեմոլոյով» սիմֆոնիան.

1) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
2) Ֆրանց Շուբերտ
3) Էդվարդ Միրզոյան
4) Յոզեֆ Հայդն

49 Ամատի, Գվարների, Ստրադիվարի՝ հանրաճանաչ

1) ջութակահարներ են
2) ջութակի վարպետներ են
3) դաշնամուրի վարպետներ են
4) դաշնակահարներ են

50 Կոնստանտին Սարաջև, Եվգենի Մրավինսկի, Հերբերտ ֆոն Կարայան, Արտուրո Տոսկանինի՝ հանրաճանաչ

1) դիրիժորներ են
2) ջութակահարներ են
3) թավջութակահարներ են
4) կոմպոզիտորներ են

51 Դմիտրի Շոստակովիչի №7 սիմֆոնիայի «ներխուժման» դրվագը գրված է

1) Վարիացիոն ձևով
2) Բարդ եռամաս ձևով
3) Սոնատային ձևով
4) Ռոնդոյի ձևով

52 Նշվածներից ո՞ր օպերան է գրված ըստ Ալեքսանդր Պուշկինի համանուն չափածո վեպի.

1) «Եվգենի Օնեգին»
2) «Անմահ Կոշչեյը»
3) «Օռլեանի կույսը»
4) «Ձյունանուշ»

53 Նշվածներից ո՞վ է «Ամուսնություն», «Խովանշչինա», «Սորոչինյան տոնավաճառ» օպերաների հեղինակը.

1) Մոդեստ Մուսորգսկի
2) Ալեքսանդր Դարգոմիժսկի
3) Անտոն Ռուբինշտեյն
4) Միլի Բալակիրև

54 Սերգեյ Պրոկոֆևի ո՞ր բալետի լիբրետոն է ստեղծել ծագումով հայ նկարիչ Գեորգի Յակուլովը (Ս.Պրոկոֆևի հետ համատեղ).

1) «Դնեպրի վրա»
2) «Պողպատյա թռիչք»
3) «Ծաղրածու»
4) «Անառակ որդին»

55 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է ռուսական առաջին երեք բալետների հեղինակը.

1) Ալեքսանդր Գլազունով
2) Պյոտր Չայկովսկի
3) Ցեզար Կյուի
4) Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով

56 Ի՞նչ սկզբունքով են դասավորված Յոհան Սեբաստիան Բախի «Լավ տեմպերացված կլավիր»-ի պրելյուդներն ու ֆուգաները

1) Ըստ կիսատոնների
2) Ըստ տոնայնությունների կվինտային շրջանի
3) Ըստ տոնայնությունների կվարտային շրջանի
4) Ըստ տոների

57 Նշվածներից ո՞ր ժանրը տեղ չի գտել Ֆրեդերիկ Շոպենի ստեղծագործության մեջ.

1) Պոլոնեզ
2) Օպերա
3) Սոնատ
4) Կոնցերտ

58 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը իտալական օպերային «Վերիզմի» ներկայացուցիչ չէ.

1) Ռուջերո Լեոնկավալո
2) Վինչենցո Բելլինի
3) Ջակոմո Պուչինի
4) Պիետրո Մասկանի

59 Նշվածներից ո՞ր օպերայից է Ռիխարդ Վագները սկսում նորամուծությունները (դեպի երաժշտական դրամա).

1) «Թռչող հոլանդացի»
2) «Պարսիֆալ»
3) «Լոհենգրին»
4) «Տանհոյզեր»

60 Նշվածներից ո՞ր ստեղծագործությունը չի պատկանում Ֆերենց Լիստի գրչին.

1) Պրելյուդներ
2) «Համլետ»
3) «Մանֆրեդ»
4) «Տակո»